

«Տխուր ողբեր թող չքանդեն քեզ, եւ ըսաւ, եւ  
 Թող չցնդին ոսկի յոյսերդ ցիրուցան.  
 Իր վերջն ունի ամէն կնճիռ, ամէն ցաւ՝  
 Չինք մոռցնող ժպիտները լուսացան:

Ահա ի՛նչպէս, տես, կապոյտն ալ կամարին  
 Մերթ ամպերու գորշութիւնով կ'աղարտի,  
 Անձրեւին տակ իր ժպիտներն կը մարին,  
 Անձրեւն, եւ այդ լաց, եւ սակայն երգն է աւարտի:

Ամէն անձրեւ արեւ մ'ունի իրմէն վերջ,  
 Ինչպէս ամէն լաց իր ժպիտն արփենի.  
 Ու տեւական ուրախութիւն մը միշտ պերճ  
 Պիտ՝ յաջորդէ ժպիտներուն երբեմնի»:

*1903, Յունուար*

## 9. ՀԻՒԱՆԴԻ ՀԵՒՔԵՐ (Ցայգերգ)

I

Վանդակին մէջ փակուած հէք  
 Թռչնիկին պէս մենաւոր,  
 Բանտըւեցան սրտիս սեզ,  
 Վարդ բաղձանքները բոլոր:

Դուրսն ամէն բան կը խայտայ,  
 Ծառ ու ծաղիկ կամ դալար.  
 Սրտիս մէջ սեւ պար մը կայ  
 Նուագներու տրտմալար:

Թռչնոց ճիչին պէս յիմար  
 Եւ նուաղկոտ կ'երկերին,  
 Թոյլ խագերու մէջ տկար՝  
 Մութ երգերս կ'երկարին:

II

Լուռ քերթուած մը կապոյտի  
 Կ'երգէ ցայգը լուսաւոր.